

«Քանի մը տարիէ ի վեր մեր ռումանիկ շրջանի մեծ գործերը կը տօնախմբուին: Այդ առթիւ, Պ. Արշակ Զօպանեան, որուն գերբուսական փրանսերէն քարգմանութիւնը *Մերքիւր տը Թրանսը* հրատարակեց քառասուն տարի առաջ, ուզած է ապացուցանել թէ մեր մեծ ռումանիկներուն փառքը մեր երկրին սահմաններէն դուրս մինչեւ հեռուները ցառագայրած է: «*Վերքթոր Հիւլօ, Շաթոպրիան եւ Լա-*

ժարթին Հայ գրականութեան մէջ» տիտղոսով սիրուն հատորի մը մէջ համախմբած է իր ձեռնով քարգմանուած գերբուսականներ, յօդուածներ, ճառեր գոր իր հայրենակիցներէն ու մանք գրած են ժԹ. դարու մեր այդ մեծ գրագէտներուն ներշնչման տակ կամ անոնց ի պատիւ: Ատիկա փառաւոր ու յուզիչ վկայութիւն մըն է:»

«ԱՆԱՀԻՏ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Այս թիւով կը փակուի Անահիտի Եօթնբորդ տարեշրջանը: Կը ցաւիմ որ փոխանակ չորս թիւ հանելու ներկայ տարուան ընթացքին, չկարողացայ երեք թիւ իսկ ի լոյս բնծայել՝ ինչպէս նախորդ երկու տարիներուն, եւ ստիպուեցայ երկու միացեալ թիւով լրացած նկատել ներկայ տարեշրջանը: Պատճառը այն է որ բաժանորդներու թիւը՝ համաշխարհային տնտեսական տաղնապին հետեւանքով՝ շատ նուազած է եւ մնացած բաժանորդներն ալ ծայրայեղօրէն ուշ կը վճարեն իրենց բաժնեգիրը (շատեր 3-4 տարիէ ի վեր չեն վճարած, հակառակ Անահիտի գործակալներու եւ իմ կողմէ եղած զիմումներուն...):

Իմ բարեկամներէս եւ հայ գրականութեան բարեկամներէն մէկ քանին, օգնելու համար ինծի այս զժուար գործին մէջ զոր կ'ուզեմ սակայն կանգուն պահել հակառակ ամէն զժուարութեանց, որոշեցին «Անահիտ-ի Բարեկամներ» անունին տակ կազմել գրասիրական մասնախումբ մը. անոնց ջանքը պիտի կայանայ Անահիտին նոր բաժանորդներ գտնելու մէջ: Փարիզի եւ ամբողջ Թրանսայի մէջ, բազմաթիւ Հայեր կան, նոյն իսկ զարգացած, գրասէր, նոյն իսկ ինծի հետ մտերմական բարեկամութեամբ կապուած, որոնք սակայն բաժանորդ

չեն Անահիտին, ինչ որ կրնային բլլալ՝ հակառակ տնտեսական տաղնապին՝ եթէ կամենային ատիկա:

«Անահիտի Բարեկամներ»ը պիտի աշխատին որ ցարդ անտարբեր մնացած այդ գրասէր Հայերը մղուին Անահիտին բաժանորդ գրուելու եւ մղուին նաեւ իրենց բաժանորդագիրը կանոնաւորապէս եւ արագօրէն վճարելու:

Եթէ Անահիտի Ֆրանսաբնակ ընթերցողներուն մէջ կան որ պիտի ուզէին միանալ «Անահիտի Բարեկամներ»ու խումբին, թող հաճին իրենց այդ բարի տրամադրութիւնը ինծի հաղորդել. շնորհակալութեամբ պիտի ընդունուի իրենց մասնակցութիւնը:

Շատ գոհ պիտի բլլայի եթէ ուրիշ քանի մը քաղաքներու մէջ ալ (Նիւ Եօրք, Պոսթոն, Գահիրէ, Աղեքսանդրիա, Պրիստի եւն. կազմուէին «Անահիտի Բարեկամներ»ու մասնախումբեր:

Երբ այսպիսի հաւաքական աջակցութիւններով գորանայ, Անահիտը պիտի կարենայ լոյս տեսնել տարին չորս թիւով, եւ մէկ կամ երկու տարի յետոյ՝ տարին վեց թիւով, ինչպէս լոյս տեսաւ առաջին երկու տարիներու ընթացքին:

Ա. Զ.

